ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ. ԸՆԹԱՑՔ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Ե. Սարգսյան

Արցախի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. դպրոցական հոգեբանական ծառայություն, հոգեբանական ծառայության պատմություն, գիտակցություն, <<անուղղակի>> և <<ուղղակի>> ծառայություն, հոգեշտկողական և զարգացնող աշխատանք, զարգացնող միջավայր, սովորողների անձնային զարգացում, հոգեբանի աշխատանքի մոդել:

Բոլոր այն հաստատությունները, որոնք ունեն կրթության ու դաստիարակության իրականացման ցածր մակարդակ, փորձում են դպրոցի հոգեբանի վրա բարդել սեփական մանկավարժական չկայացվածությունը՝ ներկայացնելով նրան գործունեության լայն դաշտ: Սկսնակ մասնագետներից շատերը ենթարկվում են այդ գայթակղությանը և սկսում են անցկացնել մանկխորհներ, ելույթներ ունենալ ծնողական ժողովներում, դասղեկների փոխարեն անցկացնել դասղեկի ժամեր, ուսուցիչների փոխարեն դասեր և այլն: Սակայն ոչ մի հոգեբանի չի հաջողվում լուծել այն ուսուցչի խնդիրը, ով վատ է սովորեցնում, փոխել այն դաստիարակին, ով չի կարողանում աշխատել խմբի հետ, կամ այն տնօրենին, ում ղեկավարել չի հաջողվում և այլն: Եվ կրկին առաջանում է հիասթափություն դպրոցի հոգեբանի նկատմամբ:

Այսօր կրթական համակարգն ապրում է, հիրավի դժվար ժամանակներ, ինչը չի կարող բացասաբար չանդրադառնալ մատաղ սերնդի առողջ սոցիալականացման վրա: Անշուշտ,

երեխայի հոգեկան զարգացման ընթացքին հնարավորինս վաղ տարիքում հետևելը համարվում է կարևորագույն խնդիր: Այս առումով խիստ կարևոր ենք համարում հանրակրթական դպրոցներում, նախադպրոցական հիմնարկներում և առհասարակ կրթական համակարգում հոգեբանական ծառայության ներդրման ուղղությամբ տարվող քայլերը: Նշենք, որ կրթության համակարգում, մասնավորապես դպրոցներում հոգեբանական ծառայությունը թույլ է տալիս իրականացնել սովորողների բազմակողմանի ախտորոշում: Այստեղ, անհատական ախտորոշումից զատ նկատի ունենք ծնողների և ուսուցիչների հարցման հնարավորությունը, սովորողների անմիջական դիտումը հասակակիցների հետ շփման գործընթացում, դասարանում զարգացնող միջավայրի կազմակերպումը, արդյունավետ ծնողավարման դասընթացների կազմակերպումը և այլն:

Դեռևս 1909 թվականին Ֆրանսիայում բացվեց առաջին դպրոցական հոգեբանական ծառայությունը: 1947 թվականին Փարիզում արդեն սկսեց աշխատել հոգեբանների խումբ՝ պրոֆեսոր Վալոնի գլխավորությամբ: Ի տարբերություն Ա. Բինեյի, Վալոնը գտնում էր, որ երեխաներին պետք է ցույց տալ հոգեբանական օգնություն՝ կրթության ու դաստիարակության պայմաններ ստեղծելով բացարձակապես բոլոր երեխաների համար:

Ռուսաստանի կրթական համակարգում հոգեբանության գործնական փորձերն ի հայտ եկան 19-20-րդ դարերում: Կրուպսկայա Կ., Կոռնիլով Կ. Ն., Լ. Վիգոտսկի, Մ. Բասով. սրանք այն անուններն են, որոնք մեծ ներդրում ունեն ոչ միայն հոգեբանության, այլև դպրոցական հոգեբանության զարգացման գործում[1]: Բլոնսկու, Վիգոտսկու կողմից արված մանկական հոգեբանության խնդիրներին ուղղված մի շարք ուսումնասիրությունները դարձան երեխաների հոգեկան զարգացմանն ուղղված գիտության հիմքը:

Գործնական հոգեբանությունը կրթական համակարգ մտցնելու իրողությանը նպաստեց Ա. Ասմոլովը, որը ենթադրում է հետևյալ սկզբունքները.

1. Գիտելիքի, հմտության ու կարողության մանկավարժությունից անցում զարգացման մանկավարժությանը,
2. Զարգացնող, փոխհատուցող, շտկող կրթական ծրագրերի մշակում նախադպրոցական, հանրակրթական, լրացուցիչ, նախնական մասնագիտական և հատուկ կրթության ոլորտներում,
3. Փորձաքննության զարգացում և զարգացնող միջավայրի նախագծում և այլն:

Ի. Վ. Դուբրովինան իր <<Դպրոցական հոգեբանական ծառայություն>> հոդվածում նշում է դպրոցի հոգեբանի աշխատանքում ստեղծագործականության ու ազատ ոճի մասին՝ դեմ արտահայտվելով խստորեն ծրագրված և սխեմատիկ մոտեցումներին[2]: Կարևորելով խորհրդային հոգեբանների կողմից առաջ քաշած տեսությունների դերը (Լ. Ի. Բոժովիչ, Լ. Ս. Վիգոտսկի, Ա. Վ. Զապորոժեց, Վ. Վ. Դավիդով, Ա. Ն. Լեոնտև, Ս. Լ. Ռուբինշտեյն, Դ. Բ. Էլկոնին և այլն), նա գտնում է, որ հոգեբանական ծառայությունը պետք է խարսխվի դրա վրա՝

1 Практическая психология образования; Учебное пособие 4-е изд. / Под редакцией И. В. Дубровиной — СПб.: Питер, 2004. — 592 с:

2 Дубровина И. В., Психологическая служба образования: Время реформ, № 2(3) апрель—июнь 2005, стр. 30:

մագիստրալ ուղղություն դիտելով սովորողների անձնային ու հոգեբանական զարգացման ապահովումը: Ի. Վ. Դուբրովինան մեջբերում է դպրոցի հոգեբանի աշխատանքի ամերիկյան մոդելը, համաձայն որի դպրոցի հոգեբանը կատարում է <<ուղղակի>> և <<անուղղակի>> ծառայություններ: <<Ուղղակի ծառայության>> ժամանակ հոգեբանը զուտ անհատական աշխատանք է տանում սովորողների հետ: Այս աշխատանքի մեջ ներառվում են թեստավորումը, խորհուրդները և որոշ կոգնիտիվ /իմացական/ և վարքային <<բորժման>> հնարներ: <<Անուղղակի ծառայությունը>> ենթադրում է հոգեբանի աշխատանքը ուսուցիչների ու ծնողների և այն մարդկանց հետ, ովքեր աշխատում են <<դժվար>> համարվող դպրոցականների հետ[3]: Գործունեության երկու տարբերակների մեջ էլ էապես կարևոր է հոգեբանի գիտակցությունը:

Հեղինակը կարևորում է հոգեախտորոշման դերը և գտնում, որ դրա վրա պետք է կառուցվեն մնացած երկուսը՝ հոգեշտկումն ու զարգացումը: Հոգեախտորոշումն օգնում է հոգեկանխարգելիչ աշխատանքների շրջանակներում իրականացնել վերահսկողական աշխատանք սովորողների հոգեկան ու անձնային զարգացման ընթացքի վրա: Դպրոցական հոգեբանի աշխատանքում պետք է փոխկապակցված լինեն հետևյալ երեք բաղադրիչները.

Դպրոցական ուսուցման գործընթացում երեխայի հոգեբանամանկավարժական կարգավիճակին և նրա հոգեբանական զարգացմանը պարբերաբար հետևելը,

Սովորողների անձի զարգացման ու արդյունավետ ուսուցման համար սոցիալ-հոգեբանական պայմանների ապահովումը,

Հոգեբանական զարգացման և ուսուցման մեջ խնդիրներ ունեցող երեխաներին օգնություն տրամադրելու համար հատուկ սոցիալհոգեբանական պայմանների ստեղծումը:

Դպրոցում հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղությունները հինգն են՝[4]

Հոգեախտորոշումը երեխայի խորացված հոգեբանամանկավարժական ուսումնասիրությունն է, նրա անհատական առանձնահատկությունների բացահայտումը, ինտելեկտուալ զարգացման մակարդակի, զարգացման խանգարումների և դրանց պատճառների որոշումը: Հոգեախտորոշման արդյունքների հիման վրա ընտրվում են հոգեբանական միջամտության ուղղվածությունը և տեսակը:

Հոգեշտկողական և զարգացնող աշխատանքը հոգեբանի ակտիվ ազդեցությունն է երեխայի անձի և անհատականության զարգացման վրա և տարիքային նորմերին այդ զարգացման համապատասխանության ապահովումը: Զարգացնող աշխատանքը ամբողջական հոգեբանական զարգացման համար սոցիալ-բանական պայմանների ստեղծումն է՝ նախատեսված հոգեբանորեն հարմարված երեխաների համար:

Լուսավորումը որոշակի հոգեբանական տեղեկատվության տրամադրումն է՝ հաշվի առնելով դպրոցականների տարիքային առանձնահատկությունները, արժեքները, զարգացման մակարդակը: Խորհրդատվությունը երեխաների

3 Дубровина И. В., Психологическая служба образования: Время реформ, № 2(3) апрель—июнь 2005, стр. 31:

4 Ալեքսանյան Ա., Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, /Խմբ., Լ. Ճաղարյան.- Եր.-Անտարես, 2011.- էջ 10:

ու մեծահասակների հետ տարվող խորհրդատվական աշխատանքն է զարգացման ուսուցման և դաստիարակության հարցերով:

Հոգեկանխարգելումը մանկավարժների և երեխաների շրջանում հոգեբանական դժվարությունների, հոգեկան խնդիրների կանխարգելմանն ուղղված միջոցառումների համալիրն է: Այդ նախապատրաստական միջոցառումներն ուղղված են երեխաների զարգացման մեջ այս կամ այն թերություններ առաջացնող արտաքին պատճառների, գործոնների և պայմանների վերացմանը և կարող են լուծում նախատեսել դեռևս առաջ չեկած խնդիրների համար:

Լ. Գարգրցյանը նշում է նաև սոցիալ-դիսպետչերական աշխատանքի անհրաժեշտության մասին, որն առաջանում է այն դեպքում, երբ խնդիրը դուրս է մղվում հոգեբանի կոմպետենտության սահմաններից, գիտելիքի, փորձի կամ հնարավորությունների անբավարարության պատճառով, և անհրաժեշտություն է առաջանում խնդիրը դուրս հանելու դպրոցի սահմաններից[5]: Իսկ ռուս հոգեբան Օվչարովան առանձնացնում է նաև հոգեբանական տեղեկատվության ուղղությունը[6]:

Ինչպե՞ս է վեր հանվում հոգեբանական խնդիրը: Տեղեկատվության հավաքագրումը անց է կացվում աշակերտի վարքի դիտումների արդյունքում: Դա կարող է լինել ինչպես դասագործընթացի, այնպես էլ դասամիջոցների, արտադասարանական միջոցառումների ժամանակ: Անհրաժեշտ տեղեկություններ կարող ենք հավաքագրել նաև տվյալ աշակերտի դասավանդող ուսուցիչներից ու դասղեկից, ծնողներից ու ընկերներից: Հոգեբանը անպայման պետք է ձեռքի տակ ունենա նաև տվյալ աշակերտի <<Անձնական գործը>>, որում ֆիքսված են հոգեբանական հետազոտությունների, հոգեախտորոշիչ, հոգեշտկող /կորրեկցիոն/ և զարգացնող աշխատանքների արդյունքները: Կարևոր է, որպեսզի հոգեբանը տեղյակ լինի տվյալ երեխայի զարգացման պատմությանը, ինչը կարող է դառնալ հետագա տեղեկությունների հիմնական աղբյուր: Հոգեբանական խնդրի բանաձևը պետք է հիմնված լինի յուրաքանչյուր տարիքային շրջանին բնորոշ հիմնական նորագոյացությունների ու առանձնահատկությունների հաշվի առմամբ: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ուսումնասիրության ընթացքում նախընտրելի է ճկուն մարտավարությունը: Աշակերտի այս կամ այն առաջադրանքի արդյունքում հոգեբանը նոր տեղեկությունների, լրացուցիչ տվյալների հիման վրա կարող է փոխել ելքային վարկածները և առաջադրել նոր հիմանվորումներ:

Առհասարակ ուսումնասիրման կամ հետազոտության մեթոդի ճիշտ ընտրությունը հոգեբանի աշխատանքի բարդ փուլերից է: Հենց այստեղ է առանձնապես վառ արտահայտվում դպրոցական հոգեախտորոշման յուրահատկությունը: Հոգեշտկողական, հոգեախտորոշման ու զարգացնող աշխատանքերի մեթոդների ընտրությունը մեծ վեճերի ու տարաձայնությունների առարկա է դառնում: Ն.

5 Գարգրցյան Լ., Հոգեբանը կրթության հոգեբանական ուղեկցության համակարգում, <<Հոգեբանությունը և կյանքը>>, 2010 1-2 <<Զանգակ>> հրատ., էջ 124:

6 Овчарова Р. В., Практическая психология образования: Учеб. Пособие (мультимедийное сопровождение курса в схемах и комментариях). - Курган: Изд-во Курганского гос. ун-та, 2006.стр. 7:

Ն. Աբոզովը մեծ փորձի արդյունքում եկավ այն համոզման, որ մարդկանց հետ տարվող գործնական աշխատանքների ընթացքում անհրաժեշտություն է ծագում վերանայել կիրառվող մեթոդները, դրանց կիրառման ձևերը, մշակումն ու ինտերպրետացիան /մեկնությունը/[7]:

Դպրոցական հոգեբանի աշխատանքում ևս պետք է հաշվի առնել հոգեբանության մեջ՝ անհատական հոգեախտորոշման երկու մոտեցումները: Քանակական, որը խարսխված է կրկնությունների, հնարավոր փոփոխությունների, վիճակագրական օրինաչափությունների բացահայտման վրա և որակական, որի առանցքում անկրկնելի և եզակի հատկություններով օժտված անհատն է:

Դպրոցի հոգեբանը պետք է տիրապետի աշակերտների հետ աշխատելու բազմաբնույթ մեթոդիակների և կիրառի ճկունությամբ: Կ. Ռոջերսն այն կարծիքին էր, որ չկա <<ամենալավ>> կամ <<միակ ճիշտ>> մեթոդ հասկացությունը: Մեթոդների կիրառման ճկունությունն ու բազմազանությունը իսկապես տալիս է որակապես նոր արդյունքներ:

Այսպես, սպասելիքները շատ են, բայց հոգեբանը պետք է նպաստի.

1. Մանկավարժական խորհրդի այն սպասելիքների ձևավորմանը, որոնք բեկվում են հոգեբանի իրավունքների, պարտականությունների, աշխատանքի հիմնական ուղղությունների ու ձևերի, հոգեբանական ծառայության ռազմավարության միջով:

2. Ախտորոշիչ հաղորդակցման իրականացմանը ամեն մակարդակի դասվարների ու դաստիարակների հետ, որը կենթադրի ապրումակցում, անձնային վարքագիծ, անձի մեջ դրականի վրա հիմնվելու դիրքորոշում:

3. Համագործակցի և փոխադարձ ազդեցություն ունենա մանկավարժների, դպրոցական պլանների ու ծրագրերի, դրանց իրականացման և դրանց արդյունքների վերլուծության վրա:

Անտարակույս, ուսումնական գործընթացում ծագող հիմնական խնդիրները կապված են սովորել չցանկացող աշակերտների հետ: Այս խնդրի հետևում կան իրական պատճառներ, որոնց վերհանման ու վերացման մեջ է կայանում դպրոցի հոգեբանի առաքելությունը:

7. Дубровина И. В., Психологическая служба образования: Время реформ, № 2(3) апрель—июнь 2005, стр. 34:

РЕЗЮМЕ

ШКОЛЬНАЯ ПСИХОЛОГИЧЕСКАЯ СЛУЖБА: ПРОЦЕСС И ЗАДАЧИ

Е. Саркисян

доцент кафедры педагогики и психологии
Арцахского государственного университета

В настоящей статье освещены некоторые вопросы, касающиеся истории, динамики и задач школьной психологической службы. Представлен ряд заслуживающих внимания подходов, которые в принципе можно применить или включить в нашу образовательную систему, с учетом специфики среды. Будучи противниками строго запрограммированного и схематического подхода, выделили значение творческого и свободного стиля на основе русской и американской модели.

SUMMARY

SCHOOL PSYCHOLOGICAL SERVICE. PROCESS AND GOALS

E. Sarkisyan

associate Professor at the chair of Pedagogics and
Psychology, Artsakh State University

This article investigates some of the issues relating to the history, dynamics and tasks of school psychological services. Given a number of noteworthy approaches, which in principle can be applied or included in our educational system, taking into account the specifics of the environment. As opponents of the strictly programmed and schematic approach, investigated the importance of the creative and free-style based on the Russian and the American models.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանյան Ա., Դպրոցի հոգեբանի մեթոդական ուղեցույց, /Խմբ., Լ. Ճաղարյան.- Եր.-Անտարես, 2011.- 112 էջ:

2. Գարգրցյան Լ., Հոգեբանը կրթության հոգեբանական ուղեկցության համակարգում, <<Հոգեբանությունը և կյանքը>>, 2010 1-2 <<Ձանգակ>> հրատ., էջ 124

3. Дубровина И. В., Психологическая служба образования: Время реформ, № 2(3) апрель—июнь 2005, стр. 30, 31:

4. Овчарова Р. В., Практическая психология образования: Учеб. Пособие (мультимедийное сопровождение курса в схемах и комментариях). - Курган: Изд-во Курганского гос. ун-та, 2001.стр.7:

5. Практическая психология образования; Учебное пособие 4-е изд. / Под редакцией И. В. Дубровиной — СПб.: Питер, 2004. — 592 с: